## ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ ԳԱՌՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Փետրվարի 10-ին Կոտայքի մարզի Գառնի գյուղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ կիրակնօրյա դպրոցի բացման արարողությունը, որի նպատակն է երեխաներին ծանոթացնել Հայ Եկեղեցու պատմությանը, ծեսերին, եկեղեցական-ազգային տոներին և ավանդություններին՝ նրանց հոգիներում սերմանելով հավատն առ Աստված և անմնացորդ սեր Հայրենիքի հանդեպ:

Կրթօջախը գործելու է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքում և կրելու է Գևորգ Բ Գառնեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը: Արդեն իսկ շուրջ 120 աշակերտներ ցանկություն են հայտնել ուսանելու կրթօջախում:

Բացման արարողությանը ներկա էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը, Գառնիի հոգևոր հովիվ Տ. Վրթանես քահանա Բաղումյանը, գյուղապետ Ա. Վարդանյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներ, բազմաթիվ մանկավարժներ և հյուրեր:

## ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է ՆՈՐ ՁԱՅՆԱՍԿԱՎԱՌԱԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սևանի Վազգենյան Հոգևոր դպրանոցի երգչախումբը թողարկել է հոգևոր երգերի՝ «Օրհնյալ է Աստված» խորագիրը կրող ձայնասկավառակը:

Սկավառակի ստեղծման նախաձեռնողներն են դպրանոցի նախկին տեսուչ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը և ներկա տեսուչ Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: Այն թողարկվել է տեր և տիկին Իոսիֆ և Մարինա Հարությունյանների (Մեծ Բրիտանիա) աջակցությամբ:

Սկավառակում ընդգրկված տասը երգերը հնչում են դպրանոցի սաների կատարմամբ՝ խմբավար Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*